

ՈՒՄ ՊԵՏԻ Է ՏԱԼ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻԸ

Ահա Բնչպիսի վէճ է սկսուել Տփիսիսի երկու անհաշտ լրագրողներ՝ «Մշակ»-ի և «Հորիզոն»-ի միջև հայ տպագրութեան 400-ամեակի և հայ գրերի գիւտի 1500-ամեակի յօրեկանի տոթիւ։ Բնչպէս յայտնի է, և էջմիածնում, և Տփիսիսում կազմուած են յօրեկնական յանձնաժողովներ այդ ազգային տօնը արժանաւայելի տօնելու, սակայն մինչդեռ էջմիածինը որոշել է տօնել հոկտեմբերի 13-ին, Տփիսիսը տօնը յետաձգել է նոյեմբերի 26-ին։ Այժմ հարց է բարձրացիլ, որ այդ երկու յանձնաժողովները միասնաւ և միեւնոյն օրը տօնեն, սակայն երկուսն էլ յամառել են և չեն ուզում զիջիլ։ Այդ տոթիւ ահա Հ. Առաքելեան, Ստ. Մալխասեան մի կողմից—Լէօն միւս կողմից սկսել են բանակուիւններ, կարծես խնդիրը ինչ որ թիթի անհատական բնոյթ ունենայ և ոչ համազգային։ Մի կողմը պնդում է թէ Տփիսիսի հետ պիտի միանայ, միւսը՝ էջմիածնի։

Արդէն ազգային տօնի նախօրեակին այստեսակ բանակուիւրը ցոյց է տալի, թէ որքան մենք իրօք կուրտորական ժողովուրդ ենք, սրբան, զիտակցում ենք տօնի արժէքն ու նշանակութիւնը։

Կասկածից դուրս է, որ էջմիածինը, իբրև կեդրոն, կաթողիկոսը իբրև պատուաւոր նախագահ այդ յանձնաժողովի շատ առաւելութիւններ ունի և նախապատիւ պէտք է համարուի։ Սակայն, երբ էջմիածնի յանձնաժողովը մի տեսակ արհամարհանքով է նայում Տփիսիսի ժողովին, երբ նրա գրութիւններին ու առաջարկներին չի էլ ուզում պատասխանել, ինչպէս այդ երևում է Լէօն «Հորիզոն»-ում տուած բացատրութիւնից, այդ արդէն պատիւ չի բերում էջմիածնին և գործի խճճուելուն է նպաստում միայն։ Որքան էջմիածինը հողուր կեդրոն է հայութեան, նոյնքան և Տփիսիսը սուսահայերի մտաւոր կեդրոնն է և իր մէջ ունի աչքի ընկնող, պատրաստ հայ գործիչներ ու մտաւորականներ. հետևապէս Տփիսիսի ձայնը պէտք է հաշուի տանել. հասարակ քաղաքավարութիւնն անգամ պահանջում է այս էջմիածինը, երբ յօրեկնական յանձնաժողով էր կազմում, պէտք է բանակցութեան մէջ մտնէր Տփիսիսի հետ, այնտեղից էլ հրաւիրէր պատրաստի ոյժեր և Տփիսիսի մտաւորականութեան ներկայացուցիչների հետ սկսէր այդ ազգային գործը։ Սակայն նա այդ չարաւ, իր ոյժերի վրայ

վստահացած դորձ սկսեց և այժմ էլ պահանջում է, որ իրեն բոլորը հպատակուին. այդ անհօրեկաւ վարմունք էր և իրօք կարող էր դայրոյթի առիթ դառնալ, ինչպէս և դարձաւ։ Ճշմարիտ է, էջմիածինը իր իրական ոյժի հիման վրայ կարող է կարգադրել, որ դայրոցները հօկաւ. 13-ին տօնեն այդ տօնը և մի տեսակ ազգային գոյն տալ, բայց այդ կլինի միայն արտաքին ձևական ազգային տօն, քանի որ կեդրոնի մտաւորականութեան մեծ մասը զժտուած կմնայ։ Մայր Աթոռը պէտք է լաւ զիտակցէ, որ իր հեղինակութիւնը աւելի կբարձրանայ, ազգային տօնը աւելի շքեղ կլինի, երբ իր հետ կեդրոնի մտաւորականութիւնը միանայ։

Այս տեսակէտից անհրաժեշտ է, որ այժմեանից երկու յանձնաժողովներից էլ ընտրուեն մարդիկ, կազմեն մի միացեալ մարմին ու մտքերի փոխանակութիւնից յիտոյ փոխադարձ համաձայնութեան գան այդ մեծ տօնը վայելուչ կերպով կատարելու։ էջմիածինը կեդրոն մնայով, պէտք է Տփիսիսն էլ առաջնակարգ տեղը բռնէ և իր ձայնն ունենայ այգտեղ. այլապէս առանց այն էլ կիսատ պառայ, շտապով կազմուած այդ տօնը կկորցնէ իր արժէքը և մենք մի անգամ էլ ցոյց կտանք, որ բացի շատ խօսելու ու փքան ծրագրներ առաջարկելուց ոչինչ չզիտանք։ «Չուզուիւն է մայր բարեաց» ահա մեր նշանաբանը։

ՍԱՆԿԱՊԱՐՏԵԱԸ

Ուրախութեամբ կարդացի, որ Նոր-Նախիջևանի նախկին քաղաքագլուխ պ. Քերովը Պօպովը համաձայնութիւն է տուել մի յարմարաւոր շէնք կառուցանել և նուիրել Եկեղեցական Հոգաբարձութեան, այն պայմանով, որ այդտեղ տեղաւորուի մանկապարտէզը։ Իւրաքանչիւր բարեգործութիւն, անկեղծ սրտից բղխած, ըստ ինքեան արժանի է յատուկ խրախուսանքի և շնորհակալութեան, սակայն երբ բարեգործութիւնը աւելի նպատակայարմար ու ժամանակի ոգու պահանջ է լինում էլ աւելի ուշադրաւ է դատնում։

Հայ մանուկի կրթութեան ու դաստիարակութեան գործը չափազանց մեծ պակասներ ունի և դրանց մէջ ամենաէականը՝ ընտանեկան կրթութեան պակասն է, որ աչք ծակելու չափ ամենուրէք իր տղեղ հետեանքներով երևան է

